

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՂՅԱՆ ԱՆՆԱ ԳԱԳԻԿԻ

**ԱՆԳԼԵՐԵՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Իգոր Կարապետի Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Իննա Ռոբերտի Սարգսյան

մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Սուսաննա Խուրշուդի Բաղդասարյան


Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թ. ապրիլի 30-ին, ժամը 12⁰⁰-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. մարտի 21 -ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝  Թերազա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Տեխնիկական բուհում օտար լեզուների ուսուցումը շարունակական բարելավման անհրաժեշտություն ունի: Ավանդաբար հայախոս ուսանողները կարողացել են օգտվել հիմնականում ռուսալեզու տեխնիկական գրականությունից: Լինելով երկլեզու կամ տիրապետելով բավականին լավ ռուսերեն լեզվին, հայախոս ուսանողները հետագայում իրենց լեզվական գիտելիքների բացը լրացնում են բուն աշխատանքային գործունեության ընթացքում:

ՀՀ-ում ճարտարապետական ուղղվածության բազում ֆակուլտետներ են գործում՝ ճարտարապետության և դիզայնի, կիրառական արվեստի և պատմամշակութային զբոսաշրջության, արդյունաբերական և քաղաքացիական շինարարության և այլն: Նշված ֆակուլտետներում անգլերենի ուսուցումը տևում է երկու տարի, դասերն անցկացվում են շաբաթական երկու ժամով: Դասախոսներն օգտվում են Ռուսաստանի Դաշնությունում լույս տեսած ճարտարապետական անգլերենի ուսուցման բուհական դասագրքերից¹:

ՀՀ-ում անգլերեն ճարտարապետական ենթալեզվի ուսուցմանը նվիրված մի մեթոդական աշխատանք է իրականացվել Ն.Վ. Պողոսյանի կողմից, որը վերաբերում է անգլերենի ճարտարապետաշինարարական տերմինաբանության ընտրության սկզբունքներն ու ուսուցման ռազմավարությունները համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ²: Տվյալ առենախոսության նորոյթն այն է, որ ստեղծվել է անգլերեն-հայերեն ճարտարապետաշինարարական տերմինների պատկերազարդ թեմատիկ բառարան, կազմվել է Microsoft Power Point ծրագրով տասը թեմատիկ բառացանկ և Microsoft Excel ծրագրով ստեղծվել է թեստավորման արդյունքների վերլուծության մոդել: ՀՀ-ի տեխնիկական բուհերում շրջանառվում է «Ուսումնասօժանդակ տեքստեր ճարտարապետությունից»³:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ-ում ստեղծված են նախադրյալներ տվյալ

¹Д. Г. Бурлак, А. И. Бурлак, Е. О. Революнт, Л. С. Ямпольский, Пособие по английскому языку для инженерно-строительных и архитектурных вузов, Высшая школа. – М. – 1988. – Е.Н. Безручко, Английский для архитекторов, Изд-во: MapT. - 2004. –192 с.

²Ն.Վ. Պողոսյան, Անգլերենի ճարտարապետաշինարարական տերմինաբանության ընտրության սկզբունքներն ու ուսուցման ռազմավարությունները համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ, սեղմ., թեկ. առ., Եր., 2010, 23 էջ:

³Ուսումնասօժանդակ տեքստեր ճարտարապետությունից /անգլերեն լեզվով/: Կազմող Ռ. Ա. Առաքելյան, Եր., ԵՊԻ, 50 էջ:

հիմնախնդիրը նոր մեթոդաբանական մակարդակով լուծելու համար, քանի որ անընդհատ մեծանում է հետաքրքրությունն անգլերեն ճարտարապետական ենթալեզվի ուսուցման նկատմամբ: Այս տեսակետից կարելի է առանձնացնել մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստի միջոցով անգլերենի ուսուցման և ուսումնառության գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու խնդիրներին նվիրված հետազոտությունները (Ս.Պ. Ասատրյան, Կ.Ա. Հայրյան, Բ.Մ. Եսաջանյան, Ս. Զ. Շեյրանյան, Հ. Ճանճապանյան, Ռ. Պետրոսյան, Ն. Գասպարյան):

Քննարկվող հիմնախնդրի առումով կարևորվում են նաև տեխնիկական ուղղվածություն ունեցող բուհական դասագրքերն ու ձեռնարկները, ուղեցույցները, ուսումնական ծրագրերն ու պլանները՝ Ա. Քեշիշյան, Ա.Վ.Եղիազարյան (1983), Մ.Հարությունյան (1999), T.Hutchinson, A.Waters (1987), W.Ulrich (1979)և ուրիշներ:

Կարևորվում են անգլերենի բառապաշարի ընտրության, բառային տարբեր միավորների ուսուցմանը նվիրված աշխատանքները (Մ. Գ. Աստվածատրյան, Ս. Պ. Ասատրյան Ս. Վ. Լույսլյան, և այլք):

Ապագա ճարտարապետը հնարավորություն չունի մշտապես օգտվել ամենօրյա իր աշխատանքային գործունեության ընթացքում թարգմանիչների ծառայությունից: Նա պետք է ընթերցի մասնագիտական գրականություն, օգտվի համապատասխան համացանցային կայքերից իր մասնագիտական և անձնային կարողությունները շարունակաբար զարգացնելու նպատակով: Ելքը մեկն է՝ նա պետք է ուսումնասիրի օտար լեզու, հաղթահարելով համապատասխան լեզվական իմացության մակարդակները, հաշվի առնելով այն, որ նա պետք կարողանա զրույցներ վարել առօրյա-խոսակցական թեմաների շուրջ, գործածել իր խոսքի մեջ ոչ միայն մասնագիտական տերմիններ, տերմինակապակցություններ, այլև անհամարժեք բառապաշար, որոնք գտնվում են ճարտարապետական բառապաշարի իմաստային զուգորդական դաշտում:

Այստեղ կարևորվում է և՛ մասնագիտական գրականության ընթերցանության, և՛ հասկանալու, և՛ թարգմանելու հիմնախնդիրը: Այդ խնդիրներն ավելի են կարևորվում հեռահաղորդակցական միջոցների օրեցօր զարգացման և կիրառման փուլում: Ապագա ճարտարապետները պետք է կարողանան թարգմանել թե՛ մասնագիտական տեքստեր, թե՛ ճարտարապետական ոլորտի տարբեր ծառայություններին վերաբերող փաստաթղթեր, ճարտարապետների,

շինարարների, նախագծերի ամենօրյա հաղորդակցության մեջ կիրառվող լեզվակաղապարներ:

Ճարտարապետական ուղղվածության անգլերեն ենթալեզուն ներկայացնելով խոսքային և ոչ խոսքային նշանային համակարգեր, իր բնույթով ոչ միայն տեխնիկական է, այլև ազգային: Մի կողմից՝ այն կրում է ազգային լեզվամտածողության կնիքը, մյուս կողմից՝ այն միտում ունի շարունակաբար հարստանալու միջազգային տերմիններով և հասկացություններով:

Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ընտրության և ուսուցման գործընթացում կարևորվում են զուտ տեխնիկական բնույթի ճարտարապետական տեքստերի հետ աշխատանքի մեթոդիկայի մշակումը: Այդ համատեքստում առաջին պլան են մղվում ճարտարապետական նախագծերը, գծագրերը, տարբեր բնույթի ճարտարապետական աշխատանքների կատարման պայմանները և կարգը, աշխատանքերի իրականացման նախագծերը և այլն, ինչպես նաև ճարտարապետական պատվերի տեքստերը, մասնագետների հաշվետվությունը և այլն:

Ուսուցողական նշանակություն ունեն նախ և առաջ գիտական, ճարտարապետական բնույթի գիտահանրամատչելի հոդվածները, գրքերը, դասագրքերը և այլն:

Այսպիսով, անգլերեն ճարտարապետական բառապաշարի ընտրության և ուսուցման մեթոդական համակարգի ստեղծման արդիականությունը կասկած չի հարուցում:

Տեսագոտության օբյեկտը մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման համակարգն է տեխնիկական բուհում:

Տեսագոտության առարկան անգլերեն ճարտարապետական բառապաշարի ընտրության և ուսուցման գործընթացն է տեխնիկական բուհում:

Տեսագոտության նպատակն է մշակել ճարտարապետական բառապաշարի ընտրության և ուսուցման մեթոդական համակարգ, որը ներառում է տեխնիկական, ազգամշակութային և սահմանային բառաշերտերի ուսուցման և յուրացման մեթոդներն ու ընթացակարգերը:

Տեսագոտության խնդիրներն են.

1. ուսումնասիրել անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցմանը վերաբերող ժամանակակից տեսություններն ու հայեցակարգերը,
2. վերլուծել ՀՀ-ի կրթական տարածքում և արտերկրում շրջանառվող այն ուսումնամեթոդական համալիրները, որոնք կիրառվում են

տեխնիկական բուհում,

3. բացահայտել տարբեր ոճերի և ռեգիստրերի ճարտարապետական տեքստերի, ճարտարապետական սպասարկման ոլորտում ծավալվող խոսույթների հետ աշխատանքի առանձնահատկությունները և մշակել ստանդարտ և անհամարժեք բառապաշարի ուսուցմանը նպաստող համակարգված ընթացակարգեր,
4. ստեղծել անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման արդյունավետ կաղապար, որի հիմքում ընկած կլինեն հաղորդակցական, ճանաչողական լեզվաբանության և հոգեբանության, ինչպես նաև ESP սկզբունքները:

Հետազոտության մեթոդները.

1. Կառուցվածքային, գործառնական, փոխակերպական, ռեգիստր-ոճաբանական, տեքստի ժանրի և պահանջմունքների վերլուծություն:

2. Մասնագիտական կողմնորոշման տերմինների, դրանց իմաստային-զուգորդական դաշտում շրջանառվող բառապաշարի ընտրության սկզբունքների դասակարգում և համակարգում:

3. Տարբեր մեթոդական մոտեցումների համեմատություն, հակադրում, վերլուծություն:

4. Հայերենի և անգլերենի ճարտարապետական ենթալեզուների տիպաբանական վերլուծություն:

5. Նախնական վարկածի և մշակված վարժությունների համակարգի փորձարարական ստուգում և վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ ուսումնասիրվել են անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման պայմանները, ընթացակարգերը, մշակվել է մասնագիտական կողմնորոշման տեքստերի և վարժությունների ընտրության և կիրառման մեթոդական համակարգ, հիմնավորվել է առաջարկվող կաղապարի արդյունավետությունը համապատասխան փորձարարական ուսուցման ընթացքում և արդյունքում:

Հետազոտության վարկածը. Եթե հստակեցվեն մասնագիտական կողմնորոշման տեքստերի, բառապաշարի ընտրության սկզբունքները և ընթացակարգերը, մշակվի ճարտարապետական ենթալեզվի ուսուցման լսարանային և արտալսարանային համակարգ, ապա հիմք կստեղծվի ճարտարապետական բառապաշարի ուսուցման մեթոդիկական դարձնելու ավելի արդյունավետ:

Հետազոտության տեսական նշանակությունը.

Ուսումնասիրվել և վերլուծվել են անգլերեն ճարտարապետական տերմինների, հասկացությունների, համարժեք և անհամարժեք բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները լեզվաբանական և մեթոդական տարբեր համակարգերում, հիմնավորվել են անգլերեն ճարտարապետական ենթալեզվի ուսուցման գործընթացն արդյունավետ դարձնող սկզբունքների, մեթոդների ու ընթացակարգերի տեսական և մեթոդաբանական հիմքերը:

Հետազոտության գործնական նշանակությունը.

Հետազոտության հիմնական դրույթները կարող են ծառայել որպես անգլերեն ճարտարապետական ենթալեզվի ուսուցման դասընթացի նախագծման և կազմակերպման հիմք: Աշխատանքի հիմնական արդյունքները և եզրակացությունները կարող են կիրառվել տեխնիկական, ոչ լեզվական բուհերում անգլերենի ուսուցման գործընթացում:

Հետազոտության հիմնական փուլերը.

Առաջին փուլ (2016-2018): Մանկավարժական, հոգեբանական, լեզվաբանական, մեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն: Հետազոտության առաջադիր խնդիրների հստակեցում և կոնկրետացում:

Երկրորդ փուլ (2018-2020): Հետազոտության վարկածն հաստատող գիտափորձի իրականացում, արդյունքների վերլուծություն ու ամփոփում: Ստուգողական ուսուցման փաստագրական բազայի նախնական մշակում: Հետազոտության փորձարարական հիմքի նախապատրաստում:

Երրորդ փուլ (2021-2024): Փորձարարական ուսուցման կազմակերպում: Հետազոտության արդյունքների վերլուծություն և ամփոփում, հետազոտության վերջնական տարբերակի շարադրում և խմբագրում:

Հետազոտության արդյունքների արժանահավատությունը ապահովվում է կիրառված հիմնադրույթներով, տեսականորեն և գործնականորեն հիմնավորվում է մեթոդների համալիր գործածությամբ, հետազոտության օբյեկտի և առարկայի շարունակական ճշգրտմամբ, ստացված տվյալների հուսալիությամբ:

Աշխատանքի փորձաքննությունն անցել է Երևանի Ճարտարապետական համալսարանի օտար լեզուների ամբիոնում:

Հետազոտության ներդրումը: Հետազոտության արդյունքները ներդրվել են Երևանի* Ճարտարապետական համալսարանում: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են յոթ հոդվածում (տես՝ անվանացանկը

ատենախոսության սեղմագրի վերջում):

Պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները.

1. Ճարտարապետության զարգացման գիտատեխնիկական փուլում տեղի են ունենում նրա հասկացական համակարգում շրջադարձային փոփոխություններ: Մասնագիտական տերմինները և տերմինակապակցությունները սկսում են համալրվել ինչպես համագիտական եզրույթներով, այնպես էլ ազգամշակութային նշույթավորում ունեցող բառերով:

2. Խոսության վերլուծությունը սկզբունքային նշանակություն ունի ճարտարապետական տեքստերի ընտրության գործընթացում, քանի որ այն վեր է հանում անհրաժեշտ բառապաշարի ոչ միայն հոգեբանական, այլև մենթալ-մտածելակերպային առանձնահատկությունները:

3. Ճարտարապետությանը վերաբերող անգլերեն մասնագիտական բառապաշարի ուսումնասիրությունը պետք է ուղեկցվի առօրյա-խոսակցական ոճերին բնորոշ բառապաշարի ուսուցմամբ, քանի որ լեզվակիրներ ճարտարապետները նույնպես ճարտարապետական տերմինաբանությունը սկսում են սովորել բուհական կրթության շրջանակներում:

4. Հասկացության մոտեցման կիրառումը հնարավորություն է ընձեռում սովյալ ճարտարապետական տերմինը, իրույթը դիտարկել կոնկրետ իմաստային-զուգորդական դաշտում, երբ ուսանողը ծանոթանում է ընկալողական մակարդակում բոլոր հնարավոր հոմանիշային և հականիշային զուգորդումներին, ներառելով թե՛ դարձվածքային միավորները, թե՛ չեզոք խոսակցական բառաշերտը:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը.

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ծավալը 149 համակարգչային էջ է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

Առաջին «**Ճարտարապետական տեքստերի ընտրության եվ ուսուցման հիմնախնդիրը տեխնիկական բուհում**» գլխում ներկայացվում են տեքստերի ընտրության սկզբունքների կիրառման հնարավորությունները անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում:

Առաջին ենթագլխում «**Մասնագիտական կողմնորոշման տեքստերի ընտրության և ուսուցման սկզբունքները տեխնիկական բուհում**» ներկայացվում են ուսումնական և բնագրային ճարտարապետական տեքստերի տեսակները, ընտրության սկզբունքները, հաշվի առնելով տվյալ դասընթացի նպատակը, խնդիրները, ուսանողների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները, նրանց իմացական, մասնագիտական պահանջմունքները և այլն:

Հաղորդակցական մոտեցման տեսանկյունից ճարտարապետական ուղղվածության տեքստը դիտարկվում է գիտական, առօրյա-խոսակցական և գործարարական-պաշտոնական ոճերի խաչասերման համատեքստում:

Առանձնացվում է Լ.Պ. Խոլոդովայի մոտեցումը, ըստ որի՝ առանձնանում են երեք ճարտարապետական ոճի շրջան՝ գլոբալ ոճի առաջին շրջան, երբ՝ «ճարտարապետությունը դիտարկվում է որպես արվեստ և արհեստ», երկրորդ գլոբալ շրջանը համընկնում է արտադրական հեղափոխության հետ և կոչվում է «ճարտարապետությունը որպես արվեստ և տեխնիկա» («Art-tech Architecture»): Ճարտարապետության զարգացման վրա այդ շրջանում ազդում է հատկապես գեղագիտական արվեստները: Ճարտարապետության զարգացման երրորդ գլոբալ շրջանը կոչվում է «գիտատեխնիկական ճարտարապետություն» «Sci-Tech Architecture»: Ճարտարապետության զարգացման նշված շրջանները հաշվի առնելը կարևոր է թե՛ ճարտարապետական տեքստերի, թե՛ բառապաշարի ընտրություն իրականացնելիս:

Հատկանշականն է այն, որ ճարտարապետության զարգացման երրորդ գլոբալ շրջանին բնորոշ է բնական միջավայրը ճարտարապետական նորագույն լուծումներով նմանակելու միտումը:

Առաջին պլան է մղվում «կրեոլային տեքստ» հասկացությունը, որը բնորոշվում է որպես «բարդ տեքստային գոյակցություն, որի մեջ խոսքային և պատկերային տարրերը կազմում մի տեսողական, կառուցվածքային, իմաստային և գործառական ամբողջություն»:

Ճարտարապետական գերտեքստը դառնում է հատուկ ուսումնասիրության առարկա, քանի որ դրա միջոցով հնարավոր է դառնում մեծ քանակությամբ տեքստերի ներկայացումը և յուրացումը ոչ գծային ձևով: Նշվում է, որ ժամանակակից գիտությունը հասել է «կրեոլացված հիպերտեքստի» գաղափարին: Դրա առավելությունն այն է, որ այն ներառում է տարբեր տեսակի նշաններ և պատկերներ, թվային-ոչ թվային, ծայնային նշանների և ազդանշանների ուղեկցությամբ:

Ճարտարապետական հասկացությամբ դիտարկվում է որպես մասնագիտական բառապաշարի ուսուցման կարևոր միավոր, հատկապես երբ խնդիր է դրվում բացահայտել ճարտարապետական տեքստերի ազգամշակութային յուրահատկությունները:

Երկրորդ «**Ճարտարապետական կողմնորոշման բառապաշարի ընտրության և ուսուցման առանձնահատկությունները տեխնիկական բուհում**» ենթազխում ներկայացվում է ճարտարապետական անգլերեն ենթալեզվի բառակազմը՝ համագիտական, միջգիտական և նեղ մասնագիտական տերմինաբանությունը: Նշվում է, որ ճարտարապետական տերմինաբանությանը բնորոշ է բարդությունը, հարաբերությունների բազմազանությունը, գրական լեզվին մերձենալու միտումը, հոմանիշության զարգացումը, սեփական և փոխառյալ տերմինների զուգահեռ կիրառումը:

Բառապաշարի թեմատիկ խմբերը դասակարգելիս, հաշվի է առնվում ճարտարապետական կառույցների անվանումները /Պարթենոն, Արտեմիդի տաճար և այլն/, գործիչների անունները՝ ճարտարապետ, շինարար, տեխնիկաների, գործիքների և շինանյութերի անվանումները:

Ճարտարապետական տերմինների ծագումնաբանական վերլուծությունը կարևոր է այն առումով, որ հնարավոր է դառնում բացահայտել ոչ միայն դրանց ձևավորման միտումները, այլև որոշել դրանց կիրարկության դաշտն արդի փուլում: Այդ առումով կարևորվում է Ե. Ե. Միրոնովայի հետազոտությունը, որով նա վերլուծում է "air-tight door", "basement door", "elevator door", "lift-car door", "mansard window", "paneled door", "unframed door", "veneered door" տերմինները և որոշում է ոչ միայն դրանց ձևավորման

ժամանակաշրջանը, այլև բացահայտում է դրանց իմաստային դաշտի առանձնահատկությունները:

Նշվում է, որ տերմինների և հասկացությունների ծագումնաբանական վերլուծությունը նպատակահարմար է կատարել անգլերեն լեզվով, ներմուծելով բառերը համապատասխան պատկերներով և տեքստերով:

Ճարտարապետական անգլերեն ենթալեզվի բառապաշարի ընտրության սկզբունքներն ընտրելիս առաջարկվում է հաշվի առնել ոչ միայն բառային, իմաստային-զուգորդական, դարձվածքային-իմաստային դաշտերը, այլև ճարտարապետական ոլորտի սպասարկման խոսքային կաղապարները ներառող գերհասկացոյթները կամ կոնցեպտները: Դրանք են «տուն», «բնակարան», «կացարան», «բնակատեղի» և այլ գերհասկացոյթները:

Երրորդ «**Ճարտարապետական անհամարժեք բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները**» ենթազխում ներկայացվում են անհամարժեք բառապաշարի հիմնական սահմանումները:

Շեշտադրվում է ճարտարապետական բառապաշարի ուսուցման կոնցեպտուալ կամ հասկացոյթային մոտեցման կիրառման անհրաժեշտությունը, որը հնարավորություն է ընձեռում բացահայտել նշված տերմինների իմաստային և զուգորդական դաշտերի առանձնահատկությունները տարժամանկյա և համաժամանակյա կտրվածքներով, հիմնավորում է հասկացությունների և հասկացոյթների ուսուցման թեմատիկ մեթոդի արդյունավետությունը, հաստատում է այդ ուղղությամբ իրականացված լեզվաբանական աշխատանքների արդյունավետությունը:

Երկրորդ «**Մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները տեխնիկական բուհում**» գլխում ներկայացվում են ճարտարապետական բառապաշարի ուսուցման ռազմավարությունները, մեթոդները, հնարները, ընթացակարգերը, վարժությունների համակարգը: Հիմնավորվել է առաջարկվող մոդելի արդյունավետությունը:

Առաջին ենթազխում «**Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման ռազմավարությունները**» քննության են ենթարկվում ճարտարապետական բառապաշարի ուսուցման ժամանակակից ռազմավարությունները, նորագույն մանկավարժական տեխնոլոգիաները:

Աշխատանքում կարևորում է Ա. Ե. Սիգեմինայի կողմից առաջարկվող բառապաշարի ուսուցման 1/դրդապատճառ առաջացնող, 2/գրաֆիկական

դասակարգիչների, 3/ մենմոտեխնիկ, 4/ լեզվահամակարգիչ, 5/ հավանական կանխատեսման, 6/ փոխհատուցող, 7/ ռեֆլեքսիվ ռազմավարությունները:

Հանգամանորեն ներկայացվում է արմատով բառեր և թարգմանչի կեղծ բարեկամներ բացահայտելու ռազմավարությունը: Օրինակ՝ Ագորա - agora, ատրոպորտ - airport, բեմ - bema, բլոկ - block, Բրեշ - Brescia:

Երկրորդ **«Ճարտարապետական տեքստերի ընթերցման ռազմավարությունները»** քննության են ենթարկվում ճարտարապետական տեքստերի ընտրության ռազմավարությունները, որոնք ուղղակիորեն առնչվում են մասնագիտական բառապաշարի ուսուցմանը:

Հիմնականում առանձնացվում են ամփոփումների կամ ծանուցումների ընդգծման, ծանուցման, կանխագուշակող ուղեցույցի, համագործակցային ծանուցման, դժվար հարցադրման, հղման, մտահանգող ընթերցանության, ինտերակտիվ տետրի կիրառման, առանցքային հասկացությունների համակցման, հարց-պատասխան փոխհարաբերությունների հաստատման, փոխադարձ ուսուցման ռազմավարությունները, որոնք միտված բառապաշարի փոխներգործուն ընթերցանությամբ ուսուցմանը:

Երրորդ **«Անգլերեն ճարտարապետական ենթալեզվի ուսուցման կադապար արդյունավետության գիտափորձարարական հիմնավորումը»** ենթազբախում հիմնավորվում են ճարտարապետական բառապաշարի ուսուցման օրինակելի կադապարը, որը ներկայացնում է բառապաշարի ուսուցման սկզբունքները, ընթացակարգերը, մասնագիտական կողմնորոշման ընթերցանության ռազմավարությունները և վարժությունները:

Սույն մեթոդական համակարգի մշակման հիմքում ընկած է այն սկզբունքը, որ մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման գործընթացում արդյունավետ է կիրառել ոչ միայն ավանդական, այլև կրեոլ տեքստեր և գերտեքստեր:

Փորձարարական ուսուցման ընթացքում կիրառվել են հետևյալ բառապաշարի ուսուցման զուգորդման, նկարների, հոմանիշների և հականիշների, զրույցի, ուղղորդող հարցերի, ամենօրյա խճանկարի, կախարդական թելի /բառախաղ/, բաց թողնված տեղերի լրացման, ինչպես նաև ընթերցանության՝ կանխատեսումներ անելու, պատկերացնելու կամ առարկայացնելու, հարցրեք տալու և հարցերին պատասխանելու, վերապատմելու և ամփոփելու, տեքստը կյանքի փորձով դիդտարկելու ռազմավարությունները:

Համապատասխան վերլուծությամբ ցույց է տրված, որ շրջանառվող բուհական դասագրքերում կիրառվում են հարց ու պատասխանի, բազմընտրության, լրացման, փոխակերպման և այլ վարժություններ:

Նախատեքստային փուլում կիրառվում են մտագրողը, նախագուշակումը, լուսաբանումներով զուգորդումները, հարց ու պատասխանները: Բուն տեքստային փուլում ուսանողները լրացնում են աղյուսակներ, կազմակերպում են քննարկումներ, կատարում են դերային խաղեր: Հետտեքստային փուլում կազմակերպում են ներկայացումներ, գրում նամակներ, շարադրություններ: Արդյունավետ է վիկտորինաների, խաչքառերի կազմումը և կատարումը, հատկապես, երբ տեքստերը վերաբերվում են անգլալեզու տարբեր բնույթի գովազդներին:

Ուսանողները սկզբում ընթերցում են տեքստը, հետո առանձնացնում են անձանոթ բառերը և բառակապակցությունները: Հաջորդ փուլում նրանք ընդգծում են բրիտանական և հայկական ճարտարապետությանը վերաբերող նախադասությունները և ավարտական փուլում քննարկում են դրանց տարբերությունները:

Հաջորդ փուլում ուսանողները դիտում են փոքրիկ դրվագներ բրիտանական և հայկական ճարտարապետական կոթողների մասին, որոնք կարող են լինել գովազդային-գրոսաշրջային, գիտական:

Ըստ առաջարկվող մեթոդիկայի՝ ուսանողները նախնական փուլում ծանոթանում են ճարտարապետական տեքստի հետ, կատարում են բառային-ձևաբանական, քերականական վերլուծություն:

Ներկայացվում են նախագծային մեթոդի կիրառման փուլերը: Ըստ այդմ, **առաջին փուլում** ուսանողներն ընթերցում են ճարտարապետական տեքստը կամ դիտում են տեսահոլովակը, առանձնացնում են առանցքային բառերը: Հետո նրանք փորձում են թարգմանել այդ տեքստը: **Երկրորդ փուլում** նրանք կատարում են անձանոթ բառապաշարի յուրացմանը միտված աշխատանք, կազմում են նախադասություններ, ներկայացնում են դրանց իմաստային դաշտը, դրանց առնչվող բառակապակցությունները: **Երրորդ փուլի** նպատակն է բանավոր կամ գրավոր համեմատել առաջարկվող տեքստերը, ներկայացնել ոչ միայն տերմինները, այլև անհամարժեք բառապաշարը:

Երևանի Ճարտարապետության և շինարարական համալսարանի ճարտարապետության և շինարարական տեխնոլոգիաների ֆակուլտետներում իրականացվել է փորձարարական ուսուցում, որի ընթացքում ստուգվել է

ճարտարապետական տեքստերի միջոցով անհամարժեք բառապաշարի ուսուցման արդյունավետ կաղապարը: Փորձարարական ուսուցումը տևել է 1 տարի: Ուսանողների թիվը փորձարարական խմբում եղել է 45, իսկ ստուգողական խմբում՝ 44:

Փորձարարական խմբում ուսուցման ավարտական փուլում առաջարկվել է իրականացնել նախագծային աշխատանք, որի նպատակն է եղել ընթերցել ճարտարապետական տարբեր ոճաժանրային բնութագրերով տեքստեր և յուրացնել ինչպես տերմիններ, այնպես էլ ճարտարապետական անհամարժեք բառապաշարը :

Նախագծային աշխատանքին մասնակցել են չորս ուսանողական խումբ:

Նախագծային աշխատանքի ընթացքում ստուգվել են ուսանողների հետևյալ կարողությունները.

Ընդհանուր առմամբ, ուսանողների լեզվական կարողությունները ստուգվել են հետևյալ չափանիշներով՝

1. ճարտարապետական տեքստը ճանաչելու, ընտրելու կարողություններ,
2. ճարտարապետական տեքստում տերմինները ճանաչելու կարողություններ,
3. ճարտարապետական տեքստում խոսակցական բառերը և բառակապակցություններն առանձանցնելու կարողություններ,
4. ճարտարապետական տեքստում անհամարժեք բառապաշարը գտնելու կարողություններ,
5. ճարտարապետական տեքստի հետ նորագույն տեխնոլոգիաներով աշխատելու կարողություններ,
6. ճարտարապետական տեքստի հետ ժամանակակից ռազմավարություններով աշխատելու կարողություններ,
7. ճարտարապետական տեքստը թարգմանելու կարողություններ,
8. ճարտարապետական տեքստը վերլուծելու կարողություններ,
9. ճարտարապետական թեմատիկայով հաղորդակցվելու կարողություններ,
10. Գնահատման թղթապանակների ստեղծման կարողություններ:

**Փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների
ամփոփիչ աղյուսակ 1**

Կարողություններ	Փորձարարական խումբ - 45		Ստուգողական խումբ - 44	
	Գիտափորձի սկզբում	Գիտափորձի վերջում	Գիտափորձի սկզբում	Գիտափորձի վերջում
Չափանիշ 1	11	16	10	13
Չափանիշ 2	9	16	8	12
Չափանիշ 3	9	17	9	13
Չափանիշ 4	8	16	9	12
Չափանիշ 5	10	16	10	13
Չափանիշ 6	9	16	8	12
Չափանիշ 7	9	16	8	11
Չափանիշ 8	8	15	8	11
Չափանիշ 9	9	15	8	12
Չափանիշ 10	9	15	8	11

Ստուգողական և փորձարարական խմբերի ցույց տված արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջարկվող կադապարի կիրառումը հիմք է ստեղծում անգլերեն լեզվով տարբեր բնույթի ճարտարապետական տեքստերի հետ աշխատանքի կարողությունների զարգացման համար:

Առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը հաստատող գիտափորձը վկայում է այն մասին, որ ճարտարապետական տեքստերի ընտրության, դասակարգման, վերլուծության և նորերի ստեղծման տարբեր նախագծերը զարգացնում են ուսանողների քննադատական, ստեղծագործական մտածողությունը, հետազոտական ինքնուրույնությունը:

Ընդհանուր առմամբ կարելի է եզրահանգել, որ մշակված մեթոդական համակարգը նպաստում է ապագա ճարտարապետների թե՛ օտարալեզու հաղորդակցական, թե՛ մասնագիտական իրազեկությունների զարգացմանը:

Եզրակացություն.

1. Ճարտարապետական տեքստերի բովանդակությունը հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն մասնագիտական տերմինների, բառապակցությունների, դարձվածքների, այլև ճարտարապետական ոլորտի գործունեության, սպասարկման լեզվի առանձնահատկությունները:
2. Ժամանակակից ճարտարապետները մեծ նշանակություն են տալիս գերտեքստերի ընթերցմանը և դրանցով հաղորդակցվելուն: Միայն մասնագիտական տերմինների իմացությամբ հնարավոր չէ ո՛չ ստեղծել գերտեքստեր, ո՛չ հասկանալ ու փոխանցել դրանք:
3. Հնարավոր չէ պատկերացնել որևէ քաղաքակրթություն առանց ճարտարապետական կառույցների անվանումների: Ուսումնասիրելով այդ անվանումների իմաստային և զուգորդական դաշտերը, կարելի է ընդհանուր պատկերացում կազմել տվյալ լեզվական հանրության սովորույթների, ավանդույթների, լեզվական, հոգեբանական կարծրատիպերի մասին:
4. Մասնագիտական բնույթի գրական և խոսակցական բառապաշարի ուսուցման տեսանկյունից ճարտարապետական տերմինների քննարկումը ցույց է տալիս, որ դրանք ճարտարապետական ոլորտի գործունեության լեզվակաղապարներում գործածվելով, չեն կարող համարվել առանցքային օտար լեզվի ուսուցման միավոր: Տարբեր տեսակի տերմինակապակցություններն արդյունավետ կարող են լինել լեզվի ուսուցման տեսանկյունից, եթե դրանք դիտարկվում է որևէ հասկացույթի կամ գերհասկացույթի զուգորդական, իմաստային դաշտերում:
5. Ճարտարապետական ենթալեզվի ուսուցման տեսանկյունից կարևոր է այն, որ իրույթները հանդես են գալիս որպես իրույթ - առարկա, որպես հասկացություն, երևույթ, բնորոշ որևէ ժողովրդի պատմությանը, մշակույթին, կենցաղին, որը չի հանդիպում մյուս ժողովրդների մոտ: Բոլոր ճարտարապետական կոթողները յուրահատուկ իրույթ են: Ինչ վերաբերում է իրույթ - բառերին, ապա դրանք այնպիսի լեզվական միջոցներ են, որոնք նշանակում են երևույթներ, առարկաներ, հասկացություններ, ինչպես նաև ասացվածքներ, թևավոր,

դարձվածքներ:

6. Հայաստանին վերաբերող տեքստերի, գերտեքստերի, կրեոլ տեքստերի ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ շատ աշխարհագրական անուններ, հատկանուններ, ճարտարապետական կոթողներ ենթարկվում են անգլերենի գրադարձման կանոններին:
7. Ուսուցման տարբեր փուլերում անհրաժեշտ է ներմուծել տեքստեր, որոնք վերաբերում են հայտնի ճարտարապետների կյանքին ու գործունեությանը: Կարևորվում են ոչ միայն Անգլիայի ճարտարապետությանը, այլև Հայաստանի ճարտարապետության նվիրված տեքստերը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Եղյան Ա. Գ. Проблемы системного описания архитектурной лексики английского языка// Լեզվաբանական և մեթոդական ուսումնասիրությունների ժողովածու, Եր., 2010, էջ 28-30:
2. Եղյան Ա. Գ. Ճարտարապետական անհամարժեք բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները տեխնիկական բուհում// Օտար լեզուները Հայաստանում, Եր., 2011, թիվ 5, էջ 35-42:
3. Եղյան Ա. Գ. Ճարտարապետական տեքստերի գործառույթները// Մանկավարժական Միտք, Եր., 2011, թիվ 3-4, էջ 119-123:
Համահեղինակ՝ Ի,Կ,կարապետյան:
4. Եղյան Ա. Գ. Անգլերեն ճարտարապետական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական մեթոդիկան// Տեղեկագիր, ՃՇՀԱՀ, Եր., թիվ 1, 2016 էջ 76-80:
5. Եղյան Ա. Գ. Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման ռազմավարությունները// Օտար լեզուները Հայաստանում, Եր., 2012 թիվ 6, էջ 32-41:
6. Եղյան Ա. Գ. Проблемное обучение и педагогические новации в преподавании иностранного языка в техническом вузе // Լեզվաբանական և մանկավարժական ուսումնասիրությունները, Եր., 2013, էջ 100-103:
7. Եղյան Ա. Գ. Актуальность сопоставительной архитектурной лексики английского языка// Հայագիտական հանդես, Եր., 2024թ. 3-4 (66-67), էջ 290-297:

ЕГЯН АННА ГАГИКОВНА
МЕТОДИЧЕСКАЯ СИСТЕМА ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОЙ
АРХИТЕКТУРНОЙ ЛЕКСИКЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - «Методика преподавания и обучения» (английский язык).

Защита диссертации состоится **30 апреля 2025 года в 12.⁰⁰** на заседании Специализированного совета 020 «Педагогика» КВОН РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, Адрес: 0010, пр. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

В диссертационном исследовании рассматриваются проблемы отбора и обучения английской архитектурной лексике в не языковом вузе.

Актуальность исследования. В техническом вузе процесс обучения иностранным языкам постоянно совершенствуется. У будущего архитектора в процессе профессиональной деятельности возможности общаться с англоязычными коллегами или обратиться к услугам переводчика ограничены. Он должен сам в разных ситуациях профессиональной деятельности отбирать и изучать англоязычную профессиональную литературу, пользоваться соответствующими источниками информации, беседовать на английском языке по разным темам, использовать в своей речи не только профессиональные термины, терминосочетания, но и безэквивалентную лексику, имеющую непосредственное отношение к ассоциативно-семантическому полю архитектурной лексики.

Будущие архитекторы должны переводить не только разные образцы специальной лексики, но и слова и выражения, имеющие отношение к документам, проектам, текстам в сфере деятельности архитекторов и строителей.

В процессе отбора и обучения английской архитектурной лексике подчеркивается значение разработки методики работы с архитектурными текстами технического характера.

Трудности разработки методической системы обучения английской архитектурной лексике объясняются еще и тем, что английский архитектурный подъязык, представляя свойства вербальных и не вербальных знаковых систем, отражает также общие характеристики не только технического, но и национального языка. Отражая особенности национального языкового мышления, менталитета, английский архитектурный подъязык развивается, заимствуя международные термины и понятия.

Таким образом не вызывает сомнения актуальность создания методической системы отбора и обучения архитектурной лексики.

Целью исследования является разработка методической системы отбора и обучения архитектурной лексики, которая включает методы и процедуры обучения и усвоения технического, национально-культурного и пограничного лексических слоев.

Задачи исследования:

1. Изучить современные теории и концепции обучения английской архитектурной лексики.
2. Проанализировать используемые в техническом вузе учебно-методические комплексы.
3. Выявить особенности работы с текстами разных стилей и регистров, дискурсами в сфере услуг архитектуры и разработать систематизированные процедуры, способствующие обучению стандартной и безэквивалентной лексики,
4. Создать модель обучения английской архитектурной лексики, в основе которой должны лежать принципы как коммуникативной, когнитивной лингвистики и психологии, так и ESP.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений.

Научная новизна исследования. Изучены условия, процедуры обучения английской архитектурной лексики, разработана методическая система отбора и обучения английской архитектурной лексики, экспериментально обоснована эффективность предложенной модели.

Теоретическое значение исследования:

Изучены и проанализированы особенности обучения английским архитектурным терминам, концептам, стандартной и безэквивалентной лексики в разных лингвистических и методических системах, обоснованы теоретические и методологические основы принципов, методов и процедур, повышающих продуктивность процесса обучения английскому архитектурному подязыку.

Практическое значение исследования.

Основные выводы и положения диссертации могут использоваться при проектировании и организации курса обучения английскому архитектурному подязыку в не языковом вузе, а также при создании и составлении учебно-методических комплексов, учебных пособий, планов конкретных уроков и программ курсов обучения иностранным языкам.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений. Основное содержание диссертации изложено на 149 страницах.

По теме диссертации опубликованы семь научных статей.

YEGHYAN ANNA GAGIK
METHODICAL SYSTEM OF TEACHING ENGLISH ARCHITECTURAL
VOCABULARY

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 - "Teaching and education methodology" (English).

The defense of the thesis will be held on **April 30, 2025 at 12⁰⁰**, at the session of the Special Board 020 "Pedagogy" HESC RA to award scientific degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Address: Tigran Mets avenue 17, 0010, Yerevan. Armenia

SUMMARY

The dissertation examines the problems of selecting and training English architectural vocabulary in a non-linguistic university.

The relevance of research. In the technical university the process of teaching foreign languages is constantly improving. For the future architect in the process of professional activity, the opportunities to communicate with English-speaking colleagues or to turn to the services of an interpreter are limited. He must himself, in different situations of professional activity, select and study the English-language professional literature, use the appropriate sources of information, talk in English on various everyday topics, use in his speech not only professional terms, term – combinations, but also the equivalent vocabulary directly related to associative –semantic field of architectural vocabulary.

Future architects should translate not only different samples of special vocabulary, but also words and expressions related to documents, projects, texts in the field of architects and constructors. In the process of selecting and teaching English architectural vocabulary, the importance of developing a methodology for working with architectural texts of a technical nature is emphasized.

The difficulties of developing a methodological system for teaching English architectural vocabulary are also explained by the fact that the English architectural sublanguage representing the properties of verbal and non-verbal sign systems reflects also the general characteristics of not only the technical but also the national language. Reflecting the peculiarities of national linguistic thinking, mentality, the English architectural sublanguage is being enriched by borrowing international terms and concepts.

Thus, there is no doubt the urgency of creating a methodical system for selecting and teaching the architecture of vocabulary.

The aim of the research is to develop a methodical system for selecting and teaching architectural vocabulary, which includes methods and procedures

for teaching and mastering technical, national - cultural and bordering lexical layers.

The objectives of the research:

1. Study modern theories and concepts of teaching English architectural vocabulary.
2. Analyze the teaching and methodological complexes used in the technical university.
3. Identify the specifics of working with texts of different styles and registers, discourses in the field of architectural services and develop systematic procedures that will help students learn standard and non - equivalent vocabulary,
4. Create a model for teaching English architectural vocabulary, which should be based on the principles of both communicative, cognitive linguistics and psychology as well as ESP.

The content of the research is reflected in the structure of the dissertation, which consists of an introduction, two chapters, conclusion, bibliography and applications.

Scientific novelty of the research: It studies the conditions, procedures for teaching English architectural vocabulary, develops a methodical system of selecting and training English architecture vocabulary, experimentally substantiates the effectiveness of the proposed model.

Theoretical significance of the research:

It studies the peculiarities of teaching English architectural terms, concepts, standard and nonequivalent lexicon in different linguistic and methodological systems and analyzes the theoretical and methodological foundations of principles, methods and procedures that increase the productivity of the teaching process of architectural sublanguage are grounded.

Practical significance of the research:

The main conclusions and theses of the dissertation can be used in the process of designing and organizing a course of teaching English architectural sublanguage in a non-linguistic institution, as well as in creating and compiling academic-methodical complexes, teaching aids, plans for specific lessons and curricula for teaching foreign languages.

The content of the research is reflected in the structure of the dissertation, which consists of an introduction, three chapters, conclusion, bibliography and applications. The main content of the thesis is set out on 145 pages. Four scientific articles have been published on the topic of the thesis.

